

« Նույն տեղում, էջ 92,

վերցրեց ոմն Թադիանոսյանից³, 1866 թ. վերջին էր, ըստ երևույթին, ևրբ Միքայելը, Մ. Սանա-
ւարյանի աշակցությամբ, Պետերբուրգից ուղևորվեց Քիֆլիս⁴, Շատ հավանական է, որ հենց այդ
ժամանակ Միքայելը վերցրեց իր հետ «Արուսյուն և Մանվելի» ձեռագիրը ու կարճ ժամանակամի-
ջուցում կարողացավ հաջողությամբ լույս ընծայել այն, անպայմանորեն Համբարձում Լինֆիանյան-
ցի, Աղայանի մոտ բարեկամի աշակցությամբ, Լինֆիանյանցն էր հրատարակում «Մեղու Հա-
յաստանին», որ ըստ ամենայնի հավանավորում էր Աղայանին, նրա տպարանում տպվեց «Արու-
սյուն և Մանվելը», նրա մոտ, հավանորեն, աշխատանքի մտավ Միքայելը:

Մենում է պարզել «Արուսյուն և Մանվելի» գրության ժամանակը Աղայանը պատմում է, որ
վերջին անգամ նա Մոսկվայից Պետերբուրգ տեղափոխվեց 1864 թ. վերջերին⁵, Հետո ասում է,
որ մեկ ձմեռ նա հիվանդացավ, պառկեց հիվանդանոցում, հիվանդանոցից դուրս գալուց հետո
մի երևկո գնաց իր ծանոթ ուսանողի մոտ, այնտեղ ծանոթացավ Ռ. Զալայանին, վերջինիս
հետ նույն օրը գնաց Կ. Նոյանի մոտ, ընտրվեց ուսանողական «ժողովի» անդամ ու այս բոլո-
րից շատ քիչ ժամանակ անց՝ դրեց իր «Արուսյուն և Մանվելը»⁶, Վկայ ընթերցվեց «ժողովում» և
արժանացավ խանդավառ ընդունելության, բայց, ըստ երևույթին, այն զգալիորեն տարբերվում
էր հետագայում տպագրվածից⁷:

Վերը հիշված «մեկ ձմեռ» հավանորեն ոչ թե 1864—65 թ. ձմեռն է, այսինքն Աղայանի Մոսկ-
վայից Պետերբուրգ տեղափոխվելուց անմիջապես հետո, այլ հետևյալ՝ 1865—66 թ. ձմեռը:
Հետևապես, կարելի է ենթադրել, որ «Արուսյուն և Մանվելը» գրված է 1866 թ. ձմեռը կամ վաղ
զարնանը:

«Արուսյուն և Մանվելը» լույս տեսնելուց անմիջապես հետո՝ «Մեղու Հայաստանին» մի ըն-
դարձակ քննադատական նվերաց: Այն անստորագիր էր, բայց Ղ. Աղայանի վկայությամբ՝ պատ-
կանում էր Ս. Մանդինյանի գրչին⁸:

«Արուսյուն և Մանվելը»,—ասված է քննադատականում,— մի վեպ է, որը ուրախությամբ
կկարդա ծերը, երիտասարդը և մանուկը, տղամարդը և կինը, փոքր ինչ գիտցողը և ոչինչ չգիտ-
ցողը, միով բանիվ դա ամենուն համար միևնույն նշանակություն կունենա, ամենուն արցունքներ
թափել կուտա, ամենուն խնդիրներ կառաջարկե, որոնց վրա պիտի մտածել և լուծել, ամենուն
էն մարդիկ ցույց կտա, որոնց մենք ամեն օր տեսնում ենք, որոնց հետ ամեն օր հարակցու-
թյուն և գործ ունենք: Դա կենդանի մարդիկ ցույց կտա, կենդանի բուն հայերին ցույց կտա և ոչ
թե ինչպես մեղրամոմից ձուլած մարդիկ են...»⁹:

2.

«Արուսյուն և Մանվելի» ր. տպագրությունը սկսվեց 1883 թ.: Բաժանորդագրության համար
պատրաստած թերթիկներում տպագրված էր հետևյալը.

«Տպագրության համար պատրաստ է Արուսյուն և Մանվել ազգային վեպը: Սրա մի մասը
բանի տարի առաջ տպագրվեցավ էիսատ պոետ և տպագրական սխալներով լիքը, բայց այնու-
ամենայնիվ կարգի դուրս ընդունելություն գտավ, և ամենքն էլ անհամբեր սպասում էին երկ-
րորդ մասի տպագրությանը: Այժմ թե՛ առաջինը և թե՛ երկրորդը միացած և ամբողջացրած է,
«ժանդակող ձեռքերի է սպասում, որ լույս տեսնի: Բաժանորդագիրը երկու մանեթ է:

Ղ. Աղայանց»

Նույնը իբրև հայտարարություն տպագրվել է նաև «Աղբյուրում»¹⁰,

Որ «Արուսյուն և Մանվելի» ու. տպագրությունը «սխալներով լիքն» է, այդ փաստ է, բայց
որ նրա երկրորդ մասն 1887 թ. արդեն պատրաստ էր ու «միացրած, լրացրած և ամբողջաց-
րած» առաջինի հետ՝ այդ կասկածելի է:

³ Նույն տեղում, էջ 92:

⁴ Նույն տեղում, էջ 88:

⁵ Նույն տեղում, էջ 67:

⁶ Նույն տեղում, էջ 74:

⁷ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 395:

⁸ Ղ. Աղայան, Իմ կյանքի գլխավոր դեպքերը, էջ 169:

⁹ «Մեղու Հայաստանի», 1867, № 17:

¹⁰ «Աղբյուր», 1887, № 2:

«Իմ կյանքի գլխավոր դեպքերում» Աղայանն ասում է, որ իր «Մի Երես նորագույն պատմությունից» գրվածքը «...պետք է մտնել «Արություն և Մանվելի» մեջ, բայց ինչ-ինչ պատճառներով այդ չհաջողվեց և ես ստիպվեցա զանազան փոփոխություններով տպիլ առանձին»։ Քիչ հետո նա ասում է, որ «Արություն և Մանվելի» «...նախագիծն այնպես է կազմած, որ ժամանակով այս աշխատության (այսինքն՝ «Իմ կյանքի գլխավոր դեպքերի» — Խ. Ս.) բովանդակությունն ես պետք է մտնել նրա մեջ։ Շատ անգամ մի բան ուզեցել եմ տեսնել կամ անել, ասելով. «Սրանով «Արությունի» մեջ մի դուրս ես կավելանա»։ Փորձը ցույց տվեց սակայն, որ այս նախագիծն անիրագործելի է գեղարվեստական տեսակետից¹¹։

Այսպիսով, պարզ է, որ եթե մինչև անգամ Աղայանը սկսել է դրել «Արություն և Մանվելի» Երկրորդ մասը, ապա այն, համենայն դեպս, չի տվարտվել։ Նույնքան պարզ է մյուս կողմից, որ «Մի Երես մեր նորագույն պատմությունիցը» և «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» պետք է դիտել, իբրև լրացում և շարունակություն «Արություն և Մանվելի»։ Ինքնակենսագրական վեպը վերածվել է սոսկական մեմուարների։

Ինչպես ասվեց, «Արություն և Մանվելի» Բ. տպագրությունը սկսել է լույս տեսնել 1888 թ.։ Ա. տպագրությունը բաղկացած էր 14 գլխից, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր վերնագիրը։ Այժմ այդ վերնագրերի անունները մասամբ փոխվում են, ու թեև գլուխների ընդհանուր բանակը մնում է նույնը, բայց ամբողջ վեպն արդեն բաժանվում է Երես մասի կամ գրքույկի, որոնք հաջորդաբար էլ լույս տեսան. առաջին գրքույկը լույս տեսավ 1888 թ., Երկրորդը՝ 1889 թ., երրորդը տպագրվեց նախ՝ 1893 թ., ապա նաև՝ 1901 թ.։ Ա. և Բ. տպագրությունների կառուցվածքին և վերնագրերին վերաբերող տարբերությունները պարզվում են հետևյալ աղյուսակից.

Ա. տպագրություն	Բ. տպագրություն
Ա. Ուխտ խաչի և ուխտ բարեկամության	Ա. Ուխտակատարություն և ուխտադրություն
Բ. Կենսագրություն	Բ. Կենսագրություն
Գ. Ծանապարհորդություն	Գ. Ծանապարհորդություն
Դ. «Որ բառնայ գրեռն ընկերին, կատարէ զօրէնսն Քրիստոսի»	Դ. Վիպական անցքեր
Ե. Նախընթաց գլխի սկիզբը	Ե. Նախընթաց գլխի սկիզբը
Չ. Քույր ու Եղբայր	Չ. Քույր ու Եղբայր
Երկրորդ զբոսայգի	
Ժ.	ձ. Մտավոր հեղաշրջումն
Ի. Պարզ դատողությունը	Բ. Սկիզբն Երկանց
Կ. Օվակիմի փիլիսոփայությունը և խորհուրդը	Գ. Օվակիմի փիլիսոփայությունը
Ծ. «Գիտի ուրախ առնէ զմարդս»	Դ. Սեր, գինի և Երգ
ժԱ. Ուխտագնացություն	Ե. Առաքելության մի փորձ
ժԲ. Մայրական սեր և մայրենի լեզու	Չ. Մայրական սեր և մայրենի լեզու
ժԳ. Մարդագետ	Է. Մարդագետ
Երրորդ զբոսայգի	
ժԴ. Աշխատություն, վարժապետություն և որսորդություն	Աշխատություն և որսորդություն

«Արություն և Մանվելի» Երկու Հրատարակությունները տարբերվում են իրարից ոչ միայն կառուցվածքով և գլուխների վերնագրերով, Վեպում գործող անձների անուններն էլ Բ. տպագրության մեջ մասնակիորեն փոփոխված են. օրինակ՝ Գյուլ-Ջհանի փոխարեն Հոփիսիմն, տեր Մարկոսի փոխարեն տեր Պետրոս, Թուստամբեգի փոխարեն Թոստոմ, Սակայն, այս տարբերություններին հետևում են այլ, ավելի կարևոր և էական տարբերություններ։

¹¹ Չ. Ա. Ղ ա յ ա ն, Իմ կյանքի գլխավոր դեպքերը, էջ 80—81։

3.

Նախ և առաջ «Արություն և Մանվելի» Երկու հրատարակություններն իրարից խիստ տարբերվում են լեզվով:

Ժիշտ է, վեպի այդ երկու հրատարակությունների լեզուն, ի տարբերություն նախորդ վեպերի՝ «Վերք Հայաստանի» և «Սոս և Վարդիթերի» հիմնականում գրական է, բայց առաջին տպագրության լեզուն 60-ական թվականների գրական լեզուն է, իսկ երկրորդ տպագրության լեզուն՝ 80-ական թվականներին: Հայտնի է, որ դրանք զգալիորեն տարբերվում են իրարից:

Ա. տպագրության լեզուն, գրական լինելով, բարբառային թեքում ունի (Ղարաբաղի բարբառ)։ Բ. տպագրության մեջ այդ թեքումը, և առհասարակ լեզվական նատուրալիզմը, մասնավորապես աղբյուրների գործածությունը, բավականաչափ վերացված է։ Վերցնենք, օրինակ, հենց ա. տպագրության 12-րդ էջի բառերը և համեմատենք Բ. տպագրության համապատասխան հատվածի բառերի հետ. սկսան—սկսեցին, դաշ—ծորափ, չէ—ոչ, իրեք—երեք, ոնց են—ինչպես են, եքա—ահագին, էրկու—երկու, ախպեր—եղբայր, քուր—բույր, վրա իրեքը—Երրորդը, ամմա զոռով ա ըլել չա—ինչրան ուժով է եղել, ով դիդա—ով գիտե, գեղ—գյուղ, ժափ տալ—շարժել, հրեն—ահա՛12:

Նույն կամ մոտավորապես նույն պատկերը կատարվի որևէ այլ հատվածի համադրման դեպքում։ Բարբառի մասին խոսելիս, իհարկե, նկատի չեն առնվում վեպի այն էջերը, ուր գործածված է այս կամ այն բարբառը՝ Ղարաբաղի (Արությունի և իր մոր զրույցը), արևմտահայերի (Արությունի և Բարսեղ քահանայի զրույցը), Թիֆլիսի (Օվակիմի կնոջ Սոփիոյի խոսքերը)։ Սրանք երկու հրատարակությունների մեջ էլ նույնն են։

Երկու հրատարակությունների լեզվական տարբերությունները վերաբերում են ոչ միայն բարբառի, այլև գրաբարի գործածությանը։ Ա. տպագրության միջ, օրինակ, կարելի է հանդիպել նույն, վերա, ծնող, ընդունակություն, ծնողաց, բնավորությանց, յ տուն, ցուցանել և այլն գրաբարյան ձևերին, որոնք բացակայում են Բ. տպագրության մեջ։

Ոճական կամ առանձին բառերի գործածության առումով էլ երկու տպագրությունները զգալիորեն տարբերվում են իրարից։ Ա. տպագրության մեջ կարգում ենք. «Տեր հայրը փոխանակ լեզվով պատասխանելու, գլխով արավ, պատճառ, նա յուր կիսատ թողած սաղմոսներն իր մտքում մրմնջում» (էջ 2)։ Մի այլ տեղում. «Եկանանց առջև կանգնած էին սաղմարդիկը, որոնք հագուստի կողմանե շատ նման էին իրարու, ապտեղ, միևնույն կերպի դաշնակը կապած էին ամենքը...» (էջ 5) և այլն։ «Պատճառ ընդգծված բառը՝ րանգի, որովհետև իմաստով, 60-ական թվականներին շատ ընդունված էր։ Մ. Նալբանդյանի գործերում, օրինակ, հաճախ կարելի է հանդիպել դրան։ Հետագայում այն գործ չէր անվում և Բ. տպագրության մեջ էլ այն մի դեպքում փոխարինվել է ուրվհետև բառով, մյուս դեպքում՝ միջակետով (էջ 4, 8)։

Պետք է ասել, որ ոճի տեսակետից ա. տպագրությունը շատ ավելի անմիջական է և հյուսթեղ, քան Բ. տպագրությունը։ Որպեսզի երկու տպագրությունների թե՛ ոճական և թե՛ լեզվական տարբերությունները պարզ լինեն, բերենք միևնույն հատվածը ա և Բ. տպագրություններից։

Ա. տպագրությունից.

«Տարիները մեկ երկու հետևից եկան անց կացան, Արությունին հասուցին տասը տարեկանին։ Այս միջոցին մի նորընծա քահանա եկավ և իջավ Ավետիքի (Արությունի հոր) տանը։ Այս քահանան էր Շամշուղա գյուղի տեր Մարկոսը, որի հետ հանդիպեցանք մենք առաջին գլխումը։ Տեր հայրը յուր ուսումն ստացել էր Հաղբատում, Սանահնում և էջմիածնում եղած գիտուն վարդապետների մոտ։

Բ. տպագրությունից.

«Այսպես երբ որ Արությունը տասը տարեկան էր արդեն, մեկ անգամ Շամշուղու նորընծա տեր Պետրոս քահանան եկավ Խաչեն և իջավ Արությունի հոր՝ Ավետիքի մոտ։ Տեր հայրը յուր ուսումն ստացել էր Սանահնի վանքումը, ուր նրա ժամանակ մի քանի գիտուն վարդապետներ կային։ Սա տեսավ Արությունին, տեսավ նրա ժամասացությունը, գրավարժությունը, ձայնի հաջողակությունը և շատ

12 Ղ. Ա զ ա յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 9: «Արություն և Մանվելի» Բ. հրատարակությունից մեջբերումները արվելու են այս տպագրությունից, իսկ ա. հրատարակությունից՝ միակ՝ 1867-ի տպագրությունից։ Այսուհետև վկայակոչելիս երկու դեպքում էլ նշվելու է սոսկ էջը՝ տեքստում, Մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են։

ինքը իրեն մի հանճարավոր մանկավարժ կարծելով, փոքրիկ մոնթի, Արուսթունի երեսի գծագրությունը համեմատեց յուր էֆիմերտեի անդամազնական բացատրությունների հետ, և եզրափակեց, որ մի զարմանալի ընդունակության տեր տղա պետք է լինի, ուստի մի քանի օրից հետո առաջարկեց Ավետիքին, որ վերադառնա Արուսթունի կրթությունը հանձնելու իրեն։

Ավետիքը, որ թեպետ աշխարհական էր, բայց «օխտը վարդապետի դադամ բան գիտեր», ուրախությամբ կատարեց տեր հոր առաջարկությունը, կարծելով որ «ծօթն իմաստասիրաց» մեջ ամենից գլխավորի հետ գործունի Գյուլ-Ջըհանի ուրախությանն ևս չափ ու սահման չկար, թեև մի կողմից նորա մայրական զգացմունքը, կարոտելու մասին, տրորվում էին...» (էջ 19—20) և այլն։

Հավանեց, համարելով նրան մի ինքնաբույս ծաղիկ հաշին անապատում, ինքն իրան մի հանճարավոր մանկավարժ կարծելով՝ Արուսթունի երեսի գծագրությունը համեմատեց էֆիմերտեի դիմազնական բացատրությունների հետ ու եզրակացրեց, որ նա մի անսովոր ընդունակության տեր տղա պետք է լինի, ուստի ինքն առաջարկեց Ավետիքին, որ Արուսթունի կրթության շարունակությունը իրան հանձնել։

Ավետիքն ուրախությամբ կատարեց տեր հոր առաջարկությունը, որովհետև յուր ծանոթ քահանաներից ամենից բարձր էր համարում նրան թե՛ վարք ու բարքի և թե՛ գիտության կողմից։ Եվ այդպես էլ էր։ Հոփսիսիմի ուրախությանն ևս չափ ու սահման չկար, թեև մի կողմից նրա մայրական զգացմունքը՝ կարոտելու մասին՝ տրորվում էին...» (էջ 14—15)։

Երկու այս հաստատվածների լեզվա-ոճական ակնհայտ տարբերությունները բնորոշ են ամբողջ վեպի համար։ Պարզ է, որ «Արուսթուն և Մանվելի» երկերոց տպագրությունը մասնակի փոփոխություններով չէ, որ տարբերվում է առաջին տպագրությունից։ Երկրորդ տպագրությունը վեպի վերափոխումն է ամբողջական։ Դա՛ վեպի վերաշարադրանք է։

Հայտնի է, որ տեքստաբանության կարևոր սկզբունքներից մեկն ստում է. գրական-գեղարվեստական երկի գիտական հրատարակության հիմքը կազմում է գրողի վերջին կամերը։ Տվյալ դեպքում, «Արուսթուն և Մանվելի» կապակցությամբ, «վերջին այդ կամերը» վեպի երկրորդ, 1888—1893 թթ. հրատարակությունն է։

Արդ. հնարավոր է արդյոք, այդ հրատարակությունը հիմք ընդունելով, տալ այն՝ մյուսի տարրնթերցումներով հանդերձ։ Այդ հարցին պետք է անմիջապես պատասխանել, որ ոչ, հնարավոր չէ, դա կլինի անիրագործելի մի խնդիր, որովհետև, ինչպես աշվեց, երկրորդ հրատարակությունը առաջինի վերաշարադրումն է, լեզվա-ոճական իմաստով տարբերվում է նրանից ոչ թե մասնակիորեն, այլ ամբողջությամբ, ծայրի ի ծայր։

Ուրեմն, եթե հնարավոր չէ երկրորդ տպագրությունը գիտական հրատարակության հիմք դարձնել (իսկ առաջինի մասին իոսք չի կարող լինել), ապա միակ ելքն այն է, որ երկու հրատարակություններն էլ տրվեն առանձին-առանձին, կողք-կողքի։

4.

Ընդունելով Լ. Տոլստոյի «Война и мир»-ի կանոնիկ տեքստի հիմքը վեպի 3-րդ՝ 18.3 թ. հրատարակությունը և ոչ թե 5-րդ՝ 1886 թ. հրատարակությունը (թե ինչով բացատրել այդ նահանջը «վերջին կամերի» սկզբունքից—այդ չէ հիմա մեզ հետաքրքրողը), Ն. Բուդդին ստում է. «Եթե այդ աշխատանքը (այսինքն՝ Տոլստոյի աշխատանքը 1873 թ. հրատարակության վրա—Ն. Ս.) կատարվելի վեպի առաջին հրապարակումից զգալի ժամանակահատված անցնելուց հետո, մենք իրավունք չենք ունենա համարել այն «կանոնիկ» տեքստ, որովհետև այն կարող էր արտացոլել Տոլստոյի էական էվոլյուցիոն աշխարհայացքի և գեղարվեստական ու գեղագիտական հայացքների ասպարեզում»¹³։

Այդ նույն առումով անդրադառնալով «Արուսթուն և Մանվելի»-ի, պիտի ասել, որ երկու հրատարակությունները, ժամանակով իրարից անջրպետված լինելով 21—26 տարով, այսինքն՝ մի ամբողջ բառորդ դարով՝ ինչպես վերը տեսանք, ոչ միայն լեզվա-ոճական առումով են տարբերվում միմյանցից, այլև թե՛ բովանդակությամբ և թե՛ արժարժած հայացքներով՝ որոշ հար-

¹³ Н. Г у д з и й, О тексте «Войны и мира», «Новый мир», 1963, № 4, էջ 245։

ցերի շուրջը՝ Հետևապես, վեպի Երկրորդ տպագրությունն առավել ևս չի կարող հանդիսանալ «կանոնիկ տեքստի» հիմք։

Երկրորդ հրատարակության մեջ Ղ. Աղայանն ավելացրել է բաղմամբով մեծ ու փոքր հատվածներ, ինչպես, օրինակ, պատմական տեղեկություններ Բոլնիս-Խաչենի մասին, «Ասլի և Քյարամա հերիաթի մանրամասն սյուժետը, դատողություններ դաստիարակության, առանձնություն և երկմտանքի վերաբերյալ, ընդարձակել է ա. հրատարակության մեջ եղած ջինդարների և նվաղող հարսների նկարագրությունները, չի զետեղել նույն այդ ա. հրատարակության «Լեւոր Լայաստանից» բերած մի մեծ հատվածը և այլն և այլն։

Սակայն, երկու հրատարակությունների մեջ եղած ամենամեծ տարբերությունը այդ տեսակետից հետևյալն է. հայտնի է, որ ա. հրատարակության մեջ է (յոթերորդ) գլուխը սոսկ նշված է ու բովանդակության փոխարեն գրված է երկու տող բազմակետ, մինչդեռ բ. հրատարակության մեջ այն հանդես է գալիս և կազմում է վեպի երկրորդ գրքույկի և. գլուխը՝ «Մտավոր Եղաշրջումն» վերնագրով։

Դժվար է ասել, թե ինչու այդ գլուխը բացակայում է ա. տպագրության մեջ։ Թերևս դրա քննությունն է արգելել Բայց դրան հակասում է Աղայանի իսկ վկայությունն այն մասին, որ գրաքննիչ Մ. Բերոյանը գիրքը հրատարակության է թույլատրել առանց կարողալու Գուցե Աղայանն ինքն է հանել։ Այս դեպքում պետք է ենթադրել, որ այդ գլուխը վեպի առաջին տպագրության ժամանակ արդեն գրած պատրաստած է եղել ու ինչ-ինչ պատճառներով դուրս է մնացել։ Նախ, նման ենթադրության համար մեծ հիմքեր չկան։ Ի վերջո հավանական է, որ այն լրացվել է վեպի բ. տպագրության ժամանակ։

Եվ իսկապես. «Արություն և Մանվել» լեպը ծավալվում է, որպես իր օրերին, տվյալ ժամանակում տեղի ունեցող դեպքերի մի շարան, մինչդեռ «Մտավոր Եղաշրջումն» գլուխը գրված է որպես անցյալ։ Ներսիսյան դպրոցի մասին Աղայանը գրում է. «Ուսման առարկաներն էին այդ ժամանակ հայոց լեզու...» և այլն։ «Դպրոցի բոլոր ջանքը,—շարունակում է նա,—երկու առարկայի վրա էր դարձրած—կրոնի ու լեզվի, և այդ վատ չէր այն ժամանակվա ամենակարևոր պահանջին նայած»։ Նույնանման արտահայտություն կարելի է հանդիպել նաև հետագայում (էջ 67), իսկ գլխի նախավերջին էջում կարդում ենք. «Առայժմ քանի որ անհատը կարող է զարգանալ միայն ինքն իրան, իր ներքին ուժով, բավական է եթե մանկավարժը սանիկի այդ ներքին ուժերը շնորհակցն, ինչպես որ թույլացնում են մի քանի ժամանակում...» (էջ 68)։

Եթե առաջին բաղմամբների մեջ սոսկ անցյալն է հիշատակվում, վերջին բաղմամբի մեջ արդեն անցյալը հակադրվում է ներկային։ Այս ամենը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ, իրոք, «Մտավոր Եղաշրջումն» գլուխը բ. տպագրության ժամանակ ոչ թե արդեն պատրաստ է եղել, այլ, ընդհակառակն, նոր, հենց այդ ժամանակն է գրվել ու քանի որ այդ տեղի է ունեցել ա. տպագրությունից շատ ուշ, 21—26 տարի անց, հետևապես, այն կարող էր շարադրվել որպես անցյալ, որպես հուշ։ Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Աղայանը մտադիր է եղել (որ այդ մտադրությունը չի իրագործվել, տվյալ դեպքում նշանակություն չունի) իր վեպը և մեմուարները մի ամբողջական գործի վերափոխել և, հետևապես, շատ հետադարձ կարող էր շարադրանքի վիպական եղանակը վերածվել մեմուարային եղանակի։ Բայց այդ ևս ասում է, որ «Մտավոր Եղաշրջումն» գլուխը գրված է հետագայում, որովհետև Աղայանի վերահիշյալ մտադրությունը 80-ական թթ. մտահղացում է։

Հետաքրքիր է, որ վիպական եղանակի անցումը մեմուարայինի կարելի է դիտել վեպի նաև այն հատվածներում, որոնք չկան ա. տպագրության մեջ և որոնց գրված լինելը հասկանալի է. տպագրության համար ենթակա չէ երկրայության։ Օրինակ, խոսելով Արությունի միամտության մասին, Աղայանը գրում է. «Ուսումնասիրության այդ բարբառու և խավար ժամանակը ոչ մի խելոք երևյալ գիր չէր սովորում, նրա խելքումը չէր մտնում, նրա խելքը հակառակում էր, թեև բնազդմամբ, որ այդ ձևով սովորել անհնարին է» (էջ 4)։ «Սկիզբն երկանց» գլխի վերջում Արությունի և Մանվելի մասին գրված է. «Տարաբախտաբար նրանք ասլուում էին մի այնպիսի ժամանակ. երբ ուսումնասիրումը մի անհրաժեշտ պահանջ չէր» (էջ 82), Այս գլխի հաջորդող «Օվակիմի փրկսոփայությունը» գլխում գրված է. «Սակայն, պետք էմ համարում առաջուց ասել, որ Օվակիմը մեծ ուսում չունեի և ո՛վ ուներ այն ժամանակ մեծ ուսում, որ նա ունենար» (էջ 88)։

Պարզ է, որ վեպի երկրորդ տպագրությունը պատրաստելիս Աղայանը, անկասկած չկա՞

րից, նրա մեջ նկարագրվող անցուղարձները կարող էր ընկալել կա՛մ ուղղակի ընկալում էր որպես անցյալ։

Սա բնական է, որովհետև վեպի ա. և բ. տպագրությունների միջև ընկած տարածությունը մեծ էր։ Այս հանգամանքն իր հերթին կարող էր անդրադառնալ վեպի թե՛ բնութագրումների և թե՛ գաղափարական դրվածքների վրա։

Այդպես պատահեց Շանշյանի հետ, որի նկարագիրը տրվում է Օվակիմի խոսքերով։ Ա. տպագրության մեջ Շանշյանին անվանելով «յարկեշտ», խոհեմ ու գիտնական մարդ, Օվակիմը ներսիսյան դպրոցի տեսչության պաշտոնից նրան հեռացնելու կապակցությամբ ասում է. «Բայց մեղքս չեմ թագցնիլ, դա ինձ մի բիշ մղզսի մարդ ա՝ երևում։ Դա լավ դաստիարակ է, բայց աչ ազգային լուսավորության։ Ազգի էնպես չեն լուսավորիլ, ինչպես դա է կարծում, բայց հենչ չկածիցը կամ շատ վատիցը դա էլի մի բիշ լավ էր» (էջ 126—129)։ Բ. տպագրության մեջ դրվատիքները կրկնվում են, իսկ մեջ բերած խոսքերի փոխարեն կարդում ենք. «...բայց շատ է խեղճ։ Թեպետ էս էլ պետք է ասեմ, որ թեկուզ խեղճ էլ չլինի, էդ գագանների մեջ ոչինչ չի կարող անել» (էջ 87)։ Ուրեմն՝ Շանշյանն այսիս չի որակվում «մղզսի» վերավորական խոսքով, չի ճանաչվում որպես շատ վատերի մեջ մի փոքր ավելի լավը, ազգային դաստիարակ չլինելու խնդիրը հանվում է, հիմա ավելի մեղադրվում է շրջապատը, քան ինքը՝ Շանշյանը։ Այդպիսով, Շանշյանի բնութագիրը բ. տպագրության մեջ զգալիորեն փոփոխվում է։

Մեծ մանկավարժի նկարագիրն առավել փոփոխվում ու յարձրացվում է «Մտավոր հեղաշրջում» գլխում։ Նա անվանվում է ասող, օրինակելի դաստիարակ, իր սանների վրա բարոյական մեծ ազդեցություն թողնող ուսուցիչ, նոր մանկավարժության հետևորդ, հումանիստ, աշխարհաբարի շերտ կողմնակից անգամ կրոնի ուսուցման ասպարեզում։

Այս մեծարումը միանգամայն հասկանալի է։ Եթե իսկապես ճիշտ է, որ «Մտավոր հեղաշրջում» գլխում գրված է 80-ական թվականներին, երբ Աղայանն արդեն երկարամյա փորձ ունեցող մանկավարժ էր, ապա տարբեր է, որ նա չէր կարող չգիտակցել Շանշյանի խոշոր դերը այդ մանկավարժության պատմության ասպարեզում ու բարձր շնահատել ան։

Ինչ վերաբերում է նոր գլխում ու վերափոխված հատվածում Շանշյանին տված գնահատականների տարբերությանն, ապա այդ ևս հասկանալի է։ Նոր գրածում Աղայանը միանգամայն ազատ էր զգում իրեն, ոչինչ նրան չէր կաշկանդում, մինչդեռ վերափոխման ժամանակ նրան կաշկանդում էր ինքը տեքստը (ա. տպագրության), տվյալ դեպքում նաև Օվակիմը, որի կարծիքները միշտ չէ, որ համընկնում էին Աղայանի կարծիքների հետ։

Օվակիմի նկարագիրը ևս որոշ տարբերություններ ունի ա. և բ. տպագրությունների մեջ։ Երկու դեպքում էլ Օվակիմի մեխանիստական փիլիսոփայությունը մնում է նույնը. «...նրեղի չէ հիմարին մեղադրել նորա հիմարության համար,— ասում է նա,— և ծիծաղելի է իմաստունին գովել նորա իմաստության համար, պատճառ՝ դոցանից ոչ մինը և մյուսը չէին կարող աչպես չլինել, ինչպես նորա կան... Մեղադրել և գովել բայերի միտքը պետք է իմ մտքից, իմ լեզվից և իմ գրչից հեռացնեմ...» (ա. տպ., էջ 125)։ Երկուսի մեջ էլ այդ փիլիսոփայությունը Մանվելը ճշմարտացիորեն նմանեցնում է «մեր պապերի ճակատագիր ասած» բանին (ն. տ., էջ 133) ու մի փոքր հետո էլ ծիծաղում դրա վրա. «Ով ինչպես կա, չի կարող ուրիշ կերպ լինել. թե որ ուզում եք պատճառն իմանալ պիտի երկաթն արխնի հագնիք (էն վաղվա հեքաթի միջի էլած մարդի նման, որ Աստուծո մոտ ա գնացել), մի էրկաթն գավազան էլ ձեռքներիդ բռներ գնաք մեր պապ Աթամի մոտ, որ ընդիանց խաբար բերեք...» (ն. տ., էջ 139)։

Մյուս կողմից, ինքը Աղայանը, բ. տպագրության մեջ ասելով, որ «մի տարօրինակ ու՛ ուներ Օվակիմի փիլիսոփայությունը» (էջ 84), միաժամանակ փոխարինում է ա. տպագրության մեջ Օսաննայի տված Օվակիմի ոչ-դրական բնութագիրը՝ նա «մի տուտուց զադ էր... ուզում էր փիլիսոփա դառնալ, բայց չկարող» (էջ 51)՝ «դա մի շատ կարգացած մարդ է, իրանից դրեր է հանում, բաներ է գրում» (էջ 54)՝ դրական բնութագրմամբ ու հանում, սա շատ կարևոր է, բ. տպագրության մեջ այն լավը, կարելի է ասել՝ նախադասականը (բնության բռնեքների իմացումը և իշխումը նրանց վրա), ինչ կար Օվակիմի փիլիսոփայության մեջ. «Գիտուն մարդիկը,— ասում է նա,— ամեն բանի պատճառ գիտեն, բայց մենք գիտուն մարդիկ չունենք, որ էդ զահրումար պատճառներն երևացնեն ժողովրդին, որ տեսնեն իրենց աչքով, աշխատեն նրա ազդեցությամբ տակիցը դուռ գալ» (էջ 94)։

Երկու հրատարակությունների միջև տարբերություններ են նկատվում նաև ազգային-հասարակական խնդիրների կապակցությամբ։ Երկրորդ տպագրության մեջ, օրինակ, բացակա-

յում է Աղայանի նախատինքը տեր հորը՝ Մխիթարյանների սկրոնի վերաբերյալ խարդախության մասին լի գրքերին հավատալու համար (էջ 26), ակնարկները՝ քաղաքական ծանր կացության մասին (Քրարբարությունը, որ ամեն օր կատարվում էին—էջ 31), Ավետիքի հոր, Վերդու մասին (որ նա ռեժիսորական Ղարաբաղի խաներին զարի-զարի էր բերել—էջ 61), Նույն Վերդու նպատակների մասին (որ ակնհայտ քաղաքական-ապստամբական բնավորություն էին կրում—էջ 88), ազգայնության մասին (էջ 98—9, 180) և այլն:

Ծիշտ է, Նույն երկրորդ տպագրության մեջ կան էջեր, որոնք չկան առաջինի մեջ՝ ապստամբությունների վերաբերյալ Կովկասի այլ և այլ վայրերում (էջ 55), կամ քարոզ Վարդան պետության վերաբերյալ (էջ 105) և այլն: Բայց մյուս կողմից նկատելի են կրոնականության մասին տեղեկություններ, որոնք չկային առաջին տպագրության մեջ: Այստեղ խոսվում է «աստվածային անխախտ օրենքների» մասին (էջ 84), լսում ենք քարոզ «ճշմարիտ աստվածապաշտության» (էջ 104) և ստեղծող աստծո» (էջ 107) մասին, իսկ վերջին էջերից մեկում Արուսյանի մասին ասված է. «Նրա բնավորությունն այնպես էր կազմակերպված, որ ինչ բովո՞ւ էլ անցնելու լիներ նրա ուղեղը, նա կմնար մի ջերմեռանդ աստվածապաշտ Աստված նրա ամենաբարի հայրն էր, առանց նրան ինքը զինքը որք կզգար...» (էջ 141) և այլն:

Արուսյան և Մանվելի բերու տպագրությունների բովանդակության ու հայացքների միջև եղած այս տարբերություններն առավել հաստատում են այն դրույթը, որ վեպի գիտական հրատարակման դեպքում երկու տպագրություններն էլ պետք է նեկայացվեն առանձին-առանձին:

Նշելով այս տարբերությունները, դրանով բնավ վիճ չի փորվում «Արուսյան և Մանվելի» երկու տպագրությունների միջև: Երկու տպագրությունն էլ Նույն գործն են, միայն տարբեր երանգով: Աշխարհայացքային այն տարբերությունները, որ դիտվում են նրանց միջև, ճակատագրական չեն: Աղայանի համար Ղ. Աղայանը սկզբից մինչև վերջը մնում է վաթսուական, որի տեսակետները տարիների ընթացքում ընդհանուր առմամբ ավելի ու ավելի խորացել են: Բավական է հիշել այնպիսի նշանաձողեր, որպիսիք են՝ մասնավոր սեփականության ինստիտուտի նրա վճռական ժխտումը 90-ական թվականներին և հեղափոխական իդեալներին փարումը 1905 թ.: Իսկ մասնակի տատանումներ կարող էին լինել, դրանք բնական հն, մասնավոր 80-ական թվականներին ու նրանց նախորդող և հաջորդող տարիներին:

Մյուս կողմից, ճակատագրական էլ չլինելով, այդ տարբերություններն, այնուամենայնիվ, գոյություն ունեն, ու Աղայանի ժառանգության ուսումնասիրողը երբեք չպիտի մոռանա, որ նրա մուտքը գրականության մեջ, առհասարակ նրա ստեղծագործության առաջին, շատ կարևոր շրջանը բնութագրելիս պետք է հիշել «Արուսյան և Մանվելի» միայն ա. տպագրության վրա: Բ. տպագրությունը պիտի օգտագործվի ցույց տալու Աղայանի մտքի էվոլյուցիան հասարակական-գեղարվեստական և այլ ասպարեզներում:

5.

Մեզ հայտնի է Աղայանի հայտարարությունը, որ «Արուսյան և Մանվելի» առաջին հրատարակությունը լիքն է տպագրական սխալներով: Այդ սխալներն ուղղելու համար ինքը Աղայանը տալիս է մեզ երկու հենարան: Առաջին հենարանը վեպի երկրորդ հրատարակությունն է, որտեղ բազմաթիվ սխալներ սրբագրված են արդեն և հետևապես երկու հրատարակությունների պարզ համեմատությամբ կարելի է հայտարարել դրանք:

Երկրորդ հենարանը հենց ինքն առաջին տպագրությունն է, որտեղ միևնույն բառը կամ խոսքը հաճախակի երկու կամ ավելի ձևով է շարված, որը և բանալի է դառնում ուղիղը գտնելու համար: Այս միջոցը առանձապես կիրառելի է այն դեպքում, — իսկ դրանց հաճախակի կարելի է հանդիպել, — երբ տվյալ հատվածը, որտեղ սխալ է նշմարվում, հանված է երկրորդ տպագրության մեջ:

Առաջին հերթին ուղղման ենթակա են. իհարկե, ակնհայտ սխալները, վրիպակները, որոնք վեպում, իրոք, անպակաս են: Ժողովածու-ի փոխարեն կարդում ենք ժողովածի (էջ 107), **այնչե-ի** փոխարեն տպագրված է ոչինչի (էջ 138), բտնեց-ի փոխարեն՝ բտնեց (էջ 229), «ատամանց կրճտումն»-ի փոխարեն՝ «ատամանց-կրճատումն» (էջ 175), տպագրված է «տեր հայրը մոտեցավ նորան, ուր վայր իրենով ձիուց...» (էջ 43), պարզ է, որ ուր-ի փոխարեն պիտի լինի ու: Երկրորդ տպագրության մեջ սլնչիմ-ը (էջ 223) դարձած է խնչիմ, խքեթիլը

(լջ 107)՝ խքերի? (նույնը հաստատում է Վ. Ամատունու «Հայոց բառ տե բանը»): «էն որ ես դու գիտենք»-ը (լջ 140)՝ «ես ու դու գիտենք»: Ուրիշ օրինակներ կարելի է գտնել 25-րդ, 156-րդ, 159-րդ, 194-րդ և այլ շատ ու շատ էջերում:

Բայց հարցը, իհարկե, տառասխալներով չի սպառվում: Պատահում է, երբ գրածի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է մասնիկ, բառ, կամ անգամ բառակապակցություն հանել կամ տեղափոխել: Վերցնենք, օրինակ, հետևյալ նախադասությունը. «Գրիգոր Լուսավորիչը մեր հավատի գլուխն ա, բայց չկարաց իրա հորը դժոխքիցը հանել էր» (էջ 93): Պարզ է, որ ընդգծված էր-ը ավելորդ է. նույնն է ասում նաև ր. տպագրությունը:

Մի տերիշ, ավելի բարդ օրինակ: Արությունն ասում է, որ «շատ կարգացողը չի գծվի, քիչ կարգացողը կգծվի»: Պողոսն առարկում է. «Բա մեր տիրացուն ինչի՞ չի գծվում, քիչ ա կարգա-ցնա»: Արությունը պատասխանում է. «էնդոր չի գծվում, որ նա հենց իմանում ա թե շատ ա կարգացել, որ գիտենա թե քիչ ա կարգացել, որ շատ կարգաւ ի՞նչ կլինե՞ր կգծվի» (էջ 228): Ակնհայտ է ընդգծված բառակապակցության ավելորդ լինելը և ր. տպագրության մեջ այն հանված է:

Առավել հաճախ են այն դեպքերը, երբ անհրաժեշտ է տառ, մասնիկ կամ բառ փոխել կամ ավելացնել:

Ավելացնելու օրինակ. Արությունը և Մանվելը «մոտեցան երեք քարին, որ ժամանակ ձի-թահանքի պրեսի պաշտոն են եղել կատարելիս» (լջ 12): Պարզ է, որ ընդգծված երկու բառերի միջև պիտի լինե՞ր [մի] մասնիկը:

Փոփոխման օրինակներ:

Մանվելն ասում է. «Ես կարո՞ղ եմ երբևիցե հասնել իմ հոր տարիքի կեսին, եթե մենք միասին շարունակ ապրում էինք...» (էջ 105), պիտի լինի՞ [լին]եինք: «Թող նա դարդ անի, ով շլմանում ինչ ասել է կյանք...» (էջ 140). պիտի լինի՞ չի իմանում:

Արությունի հագուստը նկարագրելիս Ղ. Աղայանը տողատակում գրում է (ր. տպագրու-թյան մեջ չկա). «Ով հայերեն գիտի, թու հասկանա իմ բոլոր գործ դրած բառերը, մեր գրա-քառի մեջ աշխարհի բաներ չկան, որից ես օգուտ կարողանայի բաղել...» (էջ 194). պետք է լինի՞ աշխարհի[կ] բա[ռ]եր:

Վերջին օրինակ: Ժամագիրքն Արությունը թաղեց «փնյիներին մեջ, որ ազատվե՞ր ամեն օր պսոթ կորցնելուցը» (էջ 19). Հավանորեն պիտի լինի՞ կ[րկն]ելուցը:

Սակայն, լինում են դեպքեր, երբ ա. տպագրության մեջ սպրդած սխալը կրկնվում է ր. տպագրության մեջ, Օրինակ: Հասնելով սարի գլուխը տե՛ր հայրը ցույց տվեց Արությունին, թե որտեղ են գտնվում առաջնորդի տունը, կոնսիստորիան, գործակալը և այլն (էջ 43): Բայց «էնց հետևյալ էջում գործակալի փոխարեն երկու անգամ գրվում է գործակատա՛ր: Որ դա իս-կապես սխալ է, պարզվում է 66-րդ էջում, ուր գործակալն է ստանում գյուղից բերած այն մեղրահացերը, որ ըստ 44-րդ էջի սահմանված էին գործակատա՛րի համար: Նույնը բառացի կրկնվում է նաև ր. տպագրության մեջ: Պարզ է, որ գործակատա՛րի փոխարեն պետք է լինի գործակալ[ը]:

Նման դեպքերում պետք է լինել շատ աշխուրջ: Օրինակ. «Արություն և Մանվելում» երկու անգամ իրար հետևից գործ է ածված ընկերսիրություն (ընկերսիրության զգացմունք, ընկեր-սիրության ուխտ) բառը (լջ 15): Կարելի է ենթադրել, որ պիտի լինի ընկերասիրություն: Սակայն, ր. տպագրության մեջ նորից ընկերսիրություն է, առանց ա-ի: Ընկերսիրություն էլ պետք է թողնել, քանի որ, ըստ երևույթին, տվյալ բառի ուղղագրական ճիշտ ձևը Աղայանն այդ է համարել: Մինչդեռ Աղայանի երկերի 1962 թ. հրատարակված ժողովածուում այդ բառը մի դեպքում դարձրած է ընկերություն, երկրորդ դեպքում՝ ընկերասիրություն¹⁴:

«Արություն և Մանվելը» հորինված է գրական լեզվով բարբառային թերմով, այսու նրա «նշ կարելի է հանդիպել միևնույն բառի թե՛ գրական և թե՛ բարբառային տարբերակները, կամ բարբառային զանազան տարբերակները: Օրինակ. հարյուր-հարուր, երես-երես, արտասուր-արտասունք, ճանաչել-ճանանչել, նվաղիլ-նվալիլ, այնուհետև՝ աշխարհ-աշխարհ-աշխարհ-աշխարհ, ականջ-անկանջ, սովորել-սովորացնել-սորվացնել և այլն, և այլն:

Վերագրյալ բոլոր դեպքերում էլ բառի տարբեր գրությունը պետք է թողնել անփոփոխ: Հակառակ կերպով վարվելու դեպքում գրվածքի լեզուն կկորցնի իր նկարագիրը, որով և ամ-բողջ գրվածքը կկորցնի իր հարազատությունը:

14 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. առաջին, 1962, էջ 11:

Աղայանի վեպում հաճախ ենք հանդիպում միևնույն բառի դրույթյանը թե՛ ըստ խոսակցական լեզվի (կամ բարբառի) և թե՛ ըստ ուղղագրական կանոնի և քիչ չեն դեպքեր, երբ դրանք կողք-կողքի են հանգես գալիս. «ենոր շենք հազնիլ, հին կհաճենք» (էջ 133), Կարդալ գրությունը 228, 229 և 231 էջերում անընդհատ տեղի է տալիս կարբալ ձևին և հակառակը, Հագնել և կարդալ բառերի վիճակում գտնվող շատ ուրիշ բառեր են կան. օրինակ՝ խարել-խափել, հարբած-հարփած, զցել-ֆցել, մարդիկ-մարդիկ և այլն, և այլն:

Նման դեպքերում գերադասությունը, իհարկե, պետք է տալ ուղղագրական կանոնին և հարփած-ը դարձնել հարբած, ֆցելը՝ զցել և այլն:

«Արություն և Մանվելի» ա. տպագրության սխալներն ուղղելու աշխատանքին մեծապես կարող են օգնել Ստ. Մալխասյանցի և մի քանի ուրիշ բառարանները: Հատկապես պետք է նշել հինգ իր, Ղ. Աղայանի Ղարաբաղի բարբառի անսխալ բառարանը, որի ձեռագիրը պահպանվում է գրականության և արվեստի թանգարանում: Այդ բառարանի հիման վրա ճշտվեցին մի շարք բառերի գրությունը: Օրինակ՝ բազմաթիվ տեղերում համառորեն Ռիսա ձևով տպագրվող բառը պետք է լինի քյոխվա, խոչկոտալը՝ ալլոչկոտալ, կոծոտողը՝ կծոտուլ և այլն:

Հետաքրքիր է մախլաս բառի վիճակը: Այդ բառը «Արություն և Մանվելի» ա. տպագրության մեջ հանդես է գալիս մախլուսի ձևով: Ինչպես է ծագել ի-ն՝ հայտնի չէ, ևրկորոգ տպագրության մեջ այն կամ հանված է համապատասխան տեղերից (ա. տպ., էջ 66, 89, 109, 152) կամ փոխարինված է ինչ ուր է. (բ. տպ., էջ 60) և ինչ և իցէ (էջ 7) արտահայտություններով: Մախլասի-ն իհարկե, պետք է դարձնել մախլաս:

* * *

«Արություն և Մանվելի» երկու հրատարակությունների համեմատությունը նեղ բանասիրական նշանակություն չունի: Այն հետաքրքիր ու կարևոր է նաև գրականագիտական տեսակետից, որովհետև հնարավորություն է տալիս առավել ճշգրտորեն մոտենալու Աղայանի ստեղծագործության աշխարհայացքային-գեղարվեստական բնութագրման ու նրա մտքի զարգացման խնդիրներին: Էլ չենք խոսում այն մասին, թե որքան այդ կարևոր է գրողի երկերի գիտական հրատարակությունը ձեռնարկելու դեպքում:

X. С. Саркисян

О ДВУХ ИЗДАНИЯХ «АРУТЮНА И МАНВЕЛА»

(Р е з ю м е)

Роман Г. Агаяна «Арутюн и Манвел» был издан в 1867 году Вторично, разделенный на три части, роман был издан в 1888 (ч. I), 1889 (ч. II), 1893 (ч. III) годах.

Промежуток времени между двумя изданиями от 21 года до 26 лет. Этот промежуток столь длительный, что не мог не отразиться на новом переработанном издании романа.

И в самом деле, новое издание во многом отличается от старого. Во-первых, языком—диалект и элементы древнеармянского языка заменены новолитературным армянским языком. Во-вторых, своей полнотой—во второе издание включена 7-я глава, которая отсутствовала в первом издании, и сделано много новых важных добавлений. В третьих, оставаясь произведением, в котором заклеимено невежество и проповедуется прогресс, во втором издании роман несколько отличен от настроений 60-х годов.

В статье делается два вывода: во-первых, при разработке вопросов мировоззрения Агаяна надо непременно учесть эти различия между двумя изданиями «Арутюна и Манвела» и, во-вторых, при академическом издании романа ни одну из его публикаций нельзя принять за основу—оба варианта следует издать параллельно.